ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2654-Ա « 22 » մայիսի 2026թ.

Բ.ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.2/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սյուզաննա և Լիդա Զաքոյանների դիմումը՝ Բ.Պետրոսյան փողոցի հ.2/5 հասցեում, սեփականության իրավունքով Սյուզաննա և Լիդա Զաքոյաններին պատկանող ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23102025-01-0231 վկայական) զբաղեցրած հողամասը երկու գույքային միավորների բաժանելու և վարձակալության պայմանագիր կնքելու մասին:

Բ.Պետրոսյան փողոցի հ.2/5 հասցեում գտնվող ավտոտնակի կադաստրային արժեքը կազմում է 2.121.527 ՀՀ դրամ:

Հողամասի բաժանման հատակագծով և հ.1550235 վկայականի շենքի հատակագծով՝ Բ.Պետրոսյան փողոցի հ.2/5 հասցեում 01-011-0332-0077 կադաստրային ծածկագրով 0.00455հա հողամասի երկու առանձին գույքային միավորների բաժանված մակերեսը չափագրող Վլադիմիր Առաքելյանի /վկայական հ.0203/ կողմից կազմված փաստացի չափագրությամբ կազմում են համապատասխանաբար՝ 21.3քմ և 24.2քմ:

Քննարկվող հողամասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ գտնվում է տարածագնահատման սխեմայի 7-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 466-րդ և 468-րդ հոդվածների 1-ին մասերով, 207-րդ, 469-րդ և 612-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ, Երևան քաղաքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-2643-25 եզրակացությունը և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի Ն/2983-26 գրությունը.

1.Բ.Պետրոսյան փողոցի հ.2/5 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 45.5քմ մակերեսով հողամասը բաժանել համապատասխանաբար՝ 21.3քմ և 24.2քմ մակերեսներով երկու առանձին գույքային միավորների:

2.Լիազորել՝ Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյուզաննա և Լիդա Զաքոյանների հետ կնքել՝

1) վարձակալության պայմանագրեր 21.3քմ և 24.2քմ մակերեսներով հողամասերի համար մինչև 2031 թվականի ապրիլի 1-ը ժամկետով և հողամասերի տարեկան վարձավճարը հաշվարկել 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման 40-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերությամբ սահմանված դրույքաչափերով.

2) 21.12.2004թ. կնքված հ.7825 հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր:

3. Հողամասերի սահմանները որոշվում են 21.3քմ և 24.2քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

4. Բ.Պետրոսյան փողոցի հ.2/5 հասցեում գտնվող գույքի բաժանման հատակագծով առանձնացվող շինությամբ ծանրաբեռնված 21.3քմ մակերեսով հողամասին տրամադրել «Բենիկ Պետրոսյան փողոց հ.2/6» հասցեն:

5.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին՝ որոշման հիման վրա տրամադրված անշարժ գույքի հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե և Հայաստանի Հանրապետության ոստիկանության Երևան քաղաքի համապատասխան բաժնին, Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին:

6.Ընդունել ի գիտություն, որ հողամասերի վարձակալության պայմանագրերը և հողամասի վարձակալության պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիրը ենթակա են նոտարական վավերացման, իսկ դրանցից ծագող իրավունքները՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի վրա:

9.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246